ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Արմեն Արզումանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆիլիպինների Հանրապետության ք. Մանիլա, 2019թ. մայիսի 20-24-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ):

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Ասիա-Խաղաղօվկիանոսյան Երկաթուղու Նորարարությունների Համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**
   Ասիա-Խաղաղօվկիանոսյան Երկաթուղու Նորարարությունների Համաժողովը (Համաժողով) բաղկացած էր 11 նիստերից, որոնցից յուրաքանչյուրն անցկացվել է առանձին թեմայի ներքո: Ըստ այդմ, յուրաքանչյուր նիստի ընթացքում բեմ հրավիրված խոսնակների կողմից ներկայացվել են շնորհանդեսներ տվյալ նիստի թեմայով, որին հաջորդել են կարճատև հարցուպատասխանի հատվածներ.

   - Երկաթուղային ակտիվների կառավարման սկզբունքներ և կենսափուլային ռազմավարություններ,
   - Թվային լուծումներ երկաթուղային նախագծման ղեկավարման ու ուղորդման համար և շահագործման ու պահպանման (O&M) ռազմավարություններ,
   - Թվային հեղափոխությանը և նոր ուղևորային ինտերֆեյսներին առնչվող հնարավորություններ և վտանգներ,
   - Ազդանշանային և գնացքի վերահսկման համակարգերի լուծումներ,

- Ֆինանսավորման մոդելներ և մասնավոր հատվածի ներգրավման մոդելներ Նպատակակետերի Կառավարման ընկերությունների (DMCs) համար,
- Նորարարությունների ընդլայնման գործում տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունների դերը,
- Թվային երկվորյակներ և Տեղեկատվական Մոդելավորման Կառուցման (BIM) գործիքներ երկաթուղիների համար,
- Առաջընթաց գնացքի վերահսկման, անվտանգության և դինամիկ ժամանակացույցի համակարգերի զարգացումներ,
- Դրոններ, ճամփեզրերի վիճակի հսկում և այլ աջակցման համակարգեր ակտիվների կառավարման համար,
- Առաջընթաց թվային լուծումներ երկաթուղային ենթակառուցվածքի պահպանման ծառայությունների համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի պաշտոնական բացմանը կարճ ողջույնի խոսքերով հանդես եկան Ասիական Զարգացման Բանկի Նախագահի տեղակալ պրն. Բամբանգ Սուսանտոնոն, Ֆիլիպինների Տրանսպորտի Նախարարության Երկաթուղիների գծով Ենթաքարտուղար պրն. Թիմոթի Ջոն Բեյթընը և Երկաթուղիների Միջազգային Միության Գլխավոր տնօրեն պրն. Ժան-Պիեր Լուբինուն: Սրան հետևել է բարձրաստիճան հիմնական խոսնակների պանելը, որին մասնակցել են ՀՀ Տրանսպորտի, Կապի և Տեղեկատվական Տեխնոլոգիաների Նախարարի տեղակալ պրն. Արմեն Արզումանյանը, Ֆիլիպինների Ազգային Երկաթուղիների Գլխավոր կառավարիչ պրն. Ջուն Մագնոն, Չինաստանի Երկաթուղային Կորպորացիայի գիտական և տեխնոլոգիական վարչության Տնօրեն պրն. Հուո Բաոշին և Հնդկաստանի Երկաթուղիների Նախարարության Ֆինանսների գծով Գործադիր տնօրեն տկն. Նամիտա Մեհրոտրան:

Իր ելույթում Արմեն Արզումանյանը ներկայացրել է Հայաստանում երկաթուղային համակարգի ներկայիս վիճակը և դրանում ակնկալվող հետագա անելիքներն ու ծրագրերը: Առանձնակի շեշտ է դրվել Հայաստանի տարածքի միջոցով հյուսիսը հարավին կապելու հնարավորության վրա, ինչը տվյալ պարագայում կարող է ամենամատչելի ու դյուրին տարբերակը լինել՝ մեծ ներդրում ունենալով բոլոր ազդակիր երկրների տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման գործում: Հիմնական պանելը եզրափակելով՝ խոսնակներն ընդգծեցին, որ բոլոր մասնակիցների պես ակնկալում են, որ

Համաժողովը հնարավորություն կտա ոչ միայն կիսվել փորձով ու գիտելիքներով, ձևավորել նոր համագործակցությունների եզրեր ու խորացնել արդեն առկա համագործակցության շրջանակները, այլև համատեղ ուժերով ուսումնասիրել ու որոշել ոլորտում նորարարական լուծումների օգնությամբ առաջընթաց ապահովելու ուղիները: Պանելին հաջորդել են 11 թեմատիկ նիստերը:

Համաժողովի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Ասիական Զարգացման Բանկի ղեկավարության ներկայացուցիչների հետ: Մասնավորապես Գործադիր Տնօրեն/Խորհրդի անդամ Քասիմ Իշակ Սյուրքանիի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ ՀՀ ավտոմոբիլային, երկաթուղային և ավիացիոն տրանսպորտի, ինչպես նաև ճանապարհային ոլորտներում ներկայիս իրավիճակը և հետագա անելիքները՝ ԱԶԲ-ի հետ համագործակցության շրջանակներում, ջրային տրանսպորտի ոլորտում օրենսդրության մշակման ընթացքը, Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանային Տնտեսական Համագործակցություն (CAREC) ծրագրին Հայաստանի միանալու հնարավորությունը, միջազգային և ներպետական ուղևորային ու բեռնափոխադրումների հետ կապված խնդիրները, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման միջոցով զբոսաշրջությանը խթանման տարբերակները, Զվարթնոց միջազգային օդանավակայանն օդային փոխադրումների կենտրոն (hub) դարձնելու հնարավորությունը և այլ առաջնահերթություն ունեցող հարցեր:

Ասիական Զարգացման Բանկի Կենտրոնական և Արևմտյան Ասիայի Վարչության Գլխավոր Տնօրեն Լիպախ Վեռների ու նույն վարչության Տրանսպորտի և Կապի Բաժնի Տնօրեն Դոնգ-Սու Փյոյի հետ հանդիպման ժամանակ Արմեն Արզումանյանը քննարկել է մի շարք ոլորտային հարցեր, այդ թվում՝ տրանսպորտային, ինչպես նաև ճանապարհային ոլորտներում համատեղ երկարաժամկետ նոր ծրագրերի իրականացման հնարավորությունը, տարածաշրջանային տրանսպորտային ցանցի զարգացման նշանակությունը միջազգային մակարդակով, ԱԶԲ-ի աջակցությամբ քաղաքացիական ավիացիայի ոլորտում զարգացումներ իրականացնելու նպատակով մասնավոր հատվածի հետ բանակցությունների հնարավորությունը և այլ հարցեր:

Մի շարք արդյունավետ քննարկումներ են տեղի ունեցել միջազգային ներդրող ընկերությունների և ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, կայացել են որպես տարածաշրջանում արագ զարգացող երկիր Հայաստանի դիրքի ամրապնդմանն ուղղված բարձր մակարդակի հանդիպումներ, հեռանկարային նախագծերի ու ծրագրերի իրականացման հնարավորությանն ուղղված բանակցություններ և այլն (Համաշխարհային Երկաթուղային

Կորպորացիա, Երկաթուղային Միջազգային Միություն, Չինաստանի Երկաթուղիներ Ընկերություն, Գերմանիայի Երկաթգծերի Նախագծողների ՓԲԸ, Ավստրալիայի Երկաթուղային Տեխնոլոգիաների Ինստիտուտ, Վրացական Երկաթուղիներ ԲԲԸ, Թայլանդի Պետական Երկաթուղիներ, Ֆիլիպինների Հանրային-Մասնավոր Գործընկերության Կենտրոն, Սինգապուրի Ջեյմս Քուք Համալսարանի Տրանսպորտի վարչություն, Ճապոնական JR EAST Ընկերություն, Սիմենս Մոբիլիթի Ընկերություն և այլն):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ասիական Զարգացման Բանկի բարձրաստիճան ներկայացուցչության հետ հանդիպումների արդյունքում որոշվեց առավել մանրամասն ուսումնասիրել CAREC-ին Հայաստանի անդամակցության հարցն ու նախաձեռնել դրա համար պահանջվող քայլերը, ինչպես նաև մասնագիտական մակարդակով սկսել լուծումներ փնտրել տրանսպորտի բոլոր ոլորտներում տարածաշրջանային համագործակցության խթանման համար՝ նաև ներգրավելով Համաշխարհային Բանկի աջակցությունը: Արմեն Արզումանյանը խորհուրդ տվեց դիտարկել մասնավոր հատվածում առավել ակտիվ ներդրումներ կատարելու հնարավորությունը և առաջարկեց իր բացարձակ օժանդակությունը՝ տվյալ գործընթացը դյուրացնելու հարցում:

Ասիական Զարգացման Բանկի Տրանսպորտի և Կապի Բաժնի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ մոտակա ամիսներին ակնկալվում է վերջնական հաստատում ստանալ Հայաստանի համար տեխնիկական աջակցության ֆինանսավորման համար, որի նպատակը մինչև 2030 թթ. ժամանակահատվածի ճանապարհային անվտանգության ռազմավարության և քաղաքականության մաստեր պլանի մշակումն է:

Համաժողովն ավարտվել է համակազմակերպիչներ Ասիական Զարգացման Բանկի և Երկաթուղիների Միջազգային Միության բարձրաստիճան ներկայացուցիչների եզրափակիչ ամփոփումներով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արմեն Արզումանյան 29.05.2018թ.